Հետազոտական աշխատանք

Առարկա՝ Հայոց լեզու և գրականություն

Թեմա՝ Ակտիվ ուսումնառության մեթոդների կիրառումը հայոց լեզվի և գրականության դասերին՝ որպես սովորողների ներգրավվածությունը բարձրացնող միջոց

Կազմեց՝ Աննա Մաթևոսյանը

Աճանանի միջնակարգ դպրոց

Ղեկավար՝ Լուսինե Սողոմոնյան

Կապանի N2 ավագ դպրոց՝ ՊՈԱԿ

Վերապատրաստող կազմակերպության անվանում

Կապան 2022

Բովանդակություն

1. Ներածություն 1

2. Ինտերակտիվ ուսուցման էությունը 4

3. Ինտերակտիվ ուսուցման սկզբունքները և արդյունքները 7

4. Ինտերակտիվ մեթոդներ 9

5. Ակտիվ և ինտերակտիվ մեթոդների կիրառումը

գրականության ուսուցման ժամանակ,դրանց արդյունավետությունը 10

6. Հետազոտության արդյունքները 15

7. Եզրակացություն 17

8. Օգտագործված գրականություն 18

9. Հավելված՝ 19

1. Օրվա դասի պլան
2. Օրվա դասի պլան

Ներածություն

Մանկավարժական պրակտիկայում վաղուց օգտագործվում է ակտիվ ուսումնառության մեթոդներ և ձևեր եզրույթը:Սրանք տեխնոլոգիաներ են,որոնք ապահովում են աշակերտների կրթական գործունեության բարձր մակարդակը:Լայն տարածում ունի նաև մեկ այլ եզրույթ՝ինտերակտիվ ուսուցում: Ժամանակակից կրթությունը մոտեցել է այն եզրագծին,որը պահանջում է ստեղծել մանկավարժական տեխնոլոգիաներ, որոնք կապահովեն կրթական գործընթացում ամենակարեւորը՝ յուրաքանչյուր աշակերտի անհատականության զարգացումը, նրա գործունեության ինքնուրույնությունը: Անհրաժեշտ է ստեղծել ուսումնական այնպիսի պայմաններ, որի արդյունքում աշակերտը ձեռք կբերի հմտություններ և կարողություններ,որոնք հետագայում կկարողանա հաջողությամբ կիրառել գործնականում: Կյանքը սրընթաց զարգանում է , և աշակերտին անհրաժեշտ է ոչ միայն գիտելիքների հսկայական պաշար, այլեւ խոր իմացություն
ժամանակակից տեխնոլոգիաների ոլորտում: Այսօր աշխատանքի առաջարկների մեծ մասը պահանջում է համակարգչային նվազագույն գիտելիքներ, ուստի դպրոցականներին սովորեցնելիս շատ կարևոր է հաշվի առնել ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կարևորությունը:Այնպես է ստացվում,որ երբեմն տեղեկատվական կոմպենտենտությունը ավելի վճռորոշ դեր է ունենում կրթության աստիճանակարգման ժամանակ:Հասարակության զարգացման յուրաքանչյուր փուլ ունի նոր սերունդներին սովորեցնելու, նրանց կուտակված գիտելիքները, հմտությունները, ավանդույթները փոխանցելու գործընթացի իր ձևն ու բովանդակությունը:Ներկա փուլում կրթության արդիականության ,21-րդ դարում կյանքում և աշխատանքում հաջողության հասնելու պայմաններից մեկն էլ տեղեկատվական գրագիտությունն է:Սա նշանակում է ,որ ուսուցչի տեղեկատվական գրագիտությունը նրա մանկավարժական վարպետության կարևոր բաղադրիչներից մեկն է դառնում:Այսպիսով, ինտերակտիվ ուսուցումը ուսումնական գործընթացի կազմակերպման հատուկ ձև է, որը աշակերտների համատեղ գործունեությունն է ուսումնական նյութի մշակման ուղղությամբ՝ բոլորի համար ընդհանուր, բայց նշանակալի խնդիրներ լուծելու, գիտելիքների, գաղափարների և մեթոդների փոխանակման համար: Այսպիսով՝ ուսուցիչը պետք է շարժառիթ ստեղծի, հետաքրքրություն առաջացնի: Իսկ դրա համար ուսուցման պրոցեսը պետք է հետաքրքիր լինի: Նման դասընթացը պահանջում է ավելի մեծ պատրաստվածություն: Բավարար չէ միայն բովանդակության մատչելի , հասանելի ներկայացումը: Անհրաժեշտ է, որ ուսուցիչը կիրառի մեթոդներ, որոնց շնորհիվ աշակերտը կամա թե ակամա կդառնա դասապրոցեսի մասնակից: Ելնելով այս ամենից ՝ կարևորել եմ ակտիվ մեթոդներից «Վիրտուալ շրջագայություն» մեթոդի կիրառումը գրականության ժամերին ՝հատկապես գրողի

կյանքի ուսումնասիրության թեմայի ժամանակ: Հետազոտության համար սահմանել եմ հետևյալ նպատակները.

1.Վերլուծել գրականության ուսուցման ժամանակ ինտերակտիվ մեթոդների կիրառման արդյունավետությունը :

2.Զարգացնել ինտերակտիվ ուսուցման տեխնոլոգիաների կազմակերպման պայմանները:

Հետազոտության առարկան՝

Գրականության ուսուցման ինտերակտիվ մեթոդներն են:

Գրականության ուսուցման ինտերակտիվ մեթոդների կիրառմամբ աշակերտների զարգացման գործընթացն է:

Այս ամենը ավելի արդյունավետ կլինի ,եթե հաշվի առնենք երեխաների տարիքը և անհատական առանձնահատկությունները՝ հասկանալու, հիշելու, վերարտադրելու,գիտելիքները տիրապետելու և համապատասխան իրադրություններում դրանք կիրառելու պայմանները:

ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ

«Ինտերակտիվ» նշանակում է փոխազդող, փոխներգործող («Inter»՝ փոխադարձ, «act»՝ գործողություն): Ինտերակտիվ դասը փոխգործակցություն է ոչ միայն դասավանդողի և սովորողի, այլև հենց իրենց՝ սովորողների միջև, ուսումնական նյութի և սովորողների միջև: Ավանդականների հետ համեմատած, ուսուցման ինտերակտիվ մոդելներում փոխվում է նաև փոխգործակցությունն ուսուցչի հետ. նրա ակտիվությունն իր տեղն է զիջում սովորողների ակտի-վությանը, ուսուցչի խնդիրն է ստեղծել պայմաններ նրանց նախաձեռնության համար: Ինտերակտիվ տեխնոլոգիաներում սովորողները հանդես են գալիս որպես լիիրավ մասնակիցներ, նրանց փորձը պակաս կարևոր չէ ուսուցչի փորձից: Վերջինս ոչ այնքան տալիս է պատրաստի գիտելիքներ, որքան խթանում է սովորողների ինքնուրույն որոնումը: Ինտերակտիվ տեխնոլոգիաներում ուսուցիչը հանդես է գալիս մի քանի հիմնական դերերով: Նրանցից յուրաքանչյուրում նա կազմակերպում է մասնակիցների փոխգործողությունը տեղեկատվական միջավայրի այս կամ այն հատվածի հետ: Իրազեկիչ-փորձագետի դերում ուսուցիչը շարադրում է տեքստային նյութը, ցուցադրում տեսաշարքը, պատասխանում մասնակիցների հարցերին, հետևում է գործընթացի արդյունքներին և այլն: Կազմակերպչի դերում- նա կազմակերպում է սովորողների փոխգործակցությունը սոցիալական և ֆիզիկական շրջապատի հետ (բաժանում է խմբերի, խթանում է նրանց ինքնուրույն տվյալներ հավաքելը, համաձայնեցնում է առաջադրանքների կատարումը, մինի շնորհանդեսների նախապատրաստումը և այլն): Խորհրդատուի դերում ուսուցիչը դիմում է աշակերտների փորձին, օգնում է գտնել արդեն ձևակերպված խնդիրների լուծումը, ինքնուրույն ձևակերպել նորերը և ալն:Այսինքն ուսուցչի գործառույթներն են՝

1. Բացատրել սպասվելիք աշխատանքի նպատակը: Դասի սկզբում հայտարարել թեման և քննարկվող հարցերը:

2. Բաժանել ուսանողներին խմբերի և տալ հանձնարարություններ:

3. Չթողնել առանց ուշադրության սխալ մեկնաբանությունները, սակայն միևնույն ժամանակ միանգամից չտալ ճիշտ պատասխանը:

4. Հետևել, որ քննադատվի միտքը, կարծիքը, այլ ոչ թե միտքը արտահայտող ուսանողը:

5. Օգնել ուսանողներին գալ ընդհանուր եզրահանգման և դասի վերջում անել եզրակացություններ, որոնք ունեն գործնական և ընդհանուր նշանակություն: Ուսուցչի գործառույթը ուսանողի ինքնուրույն աշխատանքի կազմակերպումն է :

Ինտերակտիվ մեթոդները կիրառելիս, ուսուցիչը այլևս տեղեկատվության հիմնական աղբյուրը չէ, այլ գործընթացը կարգավորողը, կազմակերպողը:

ՈՒսումնական գործընթացի բարելավման համար կրթության ոլորտում իրականացվում են բարեփոխումներ՝ նոր չափորոշիչների մշակում. ակադեմիական նոր առարկաների, նոր դասագրքերի և ուսումնական միջոցների ներդրմանը զուգընթաց առաջացրել են դասավանդման մեթոդների փոփոխության անհրաժեշտություն,որը չի կարելի պատկերացնել առանց տեղեկատվական նոր տեխնոլոգիաների կիրառման: Ինտերակտիվ մեթոդների օգտագործումը թույլ է տալիս պայմաններ ստեղծել,նպատակներ և խնդիրներ սահմանել, որոնք պահանջում են տարբեր լուծումների որոնում և վերլուծություններ:Իսկ դրա համար ուսուցման պրոցեսը, պետք է հետաքրքիր լինի: Նման դասընթացը պահանջում է ավելի մեծ պատրաստվածություն: Բավարար չէ միայն բովանդակության մատչելի հասանելի ներկայացումը: Անհրաժեշտ է, որ դասախոսը կիրառի մեթոդներ, որոնց շնորհիվ ուսանողը կամա թե ակամա կդառնա դասապրոցեսի մասնակից: Հետազոտությունները ցույց են տվել, որ

Երբ դուք ինչ-որ բան կարդում եք՝ հիշում եք 10%

Երբ դուք ինչ-որ բան լսում եք՝ հիշում եք 20%

Երբ դուք ինչ-որ բան տեսնում եք՝ հիշում եք 30%

Երբ դուք ինչ-որ բան տեսնում և լսում եք հիշում եք 50%

Երբ դուք ինչ-որ բան ինքնուրույն եք անում՝ հիշում եք 90%-ը:

Նոր կրթական ռազմավարությունը բերել է նոր մեթոդների, մոտեցումների իրագործմանը՝ ակտիվ, ինտերակտիվ մեթոդների կիրառմանը:

Արդյունքի հասնելու համար անհրաժեշտ են գործունեության տարբեր եղանակների ընտրություն ,հաղորդակցական հմտությունների և կարողությունների զարգացում,մտորումներ կատարված աշխատանքի վերաբերյալ,որը զարգացնում է սոցիալական այնպիսի կարևոր հմտություններ, ինչպիսիք են՝ արագությունը և ճկունությունը, որոշումներ կայացնելիս մտածելու, խնդիրների նկատմամբ քննադատական մոտեցում ցուցաբերելու, շրջապատի մարդկանց կարծիքների նկատմամբ հարգանք տածելու, խմբում, թիմում արդյունավետ աշխատելու կարողություն, նոր իրավիճակին, նոր թիմին, փոփոխվող պայմաններին ավելի արագ հարմարվելու ունակություն: Ժամանակակից մանկավարժական պրակտիկայում մշակվել և կիրառվում են մի

քանի տասնյակ նոր ռազմավարություններ, հնարներ և մեթոդներ, այդ թվում՝ ինտերակտիվ: Ժամանակակից ուսուցիչը, անկախ դասավանդվող առարկայից, պետք է տիրապետի ինտերակտիվ ուսուցման մեթոդների անհրաժեշտ «զինանոցին» ,և կարողանա դրանք կիրառել ուսումնական գործընթացում :Միջնակարգ կրթության հիմնական նպատակներից է աշակերտների շրջանում տեղեկատվական մշակույթի ձևավորումը: Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հիմնական բնութագրիչներն են՝ կրթության տարբերակման և անհատականացման հնարավորությունը, ինչպես նաև աշակերտների ստեղծագործական ճանաչողական գործունեության զարգացման հնարավորությունը: Ուսումնական գործընթացը ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների հիման վրա վերակազմավորելու համար մշակվել են բազմաթիվ ուսումնական ծրագրեր և ուսումնական նյութեր: Սակայն իրականում յուրաքանչյուր ուսուցիչ մշակում է իր ծրագրերը, ինչպես նաև ուսումնական և դիդակտիկ նյութերը: Բազմաթիվ համակարգչային զարգացնող ծրագրեր կան, որոնք կարող են գրավել աշակերտներին, զարգացնել նրանց ինտելեկտուալ մակարդակը: Համակարգչային ծրագրերը հաճախ միավորվում են էլեկտրոնային և մուլտիմեդիա դասագրքերի մեջ: Անհրաժեշտ է կենտրոնանալ դպրոցականների կողմից առաջատար գիտելիքների համակարգի արդյունավետ յուրացման, դպրոցականների արդյունավետ կրթության և զարգացման վրա: Դպրոցում ուսումնական գործընթացը բարելավելու և ակադեմիական գիտությանը ինտեգրելու համար անհրաժեշտ է կազմակերպել ինտերակտիվ ուսումնական նյութերի արտադրություն :

ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԴԱՍԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

•Բոլոր մասնակիցները հավասար են

•Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի իր կարծիքը ներկայացնել ցանկացած հարցի վերաբերյալ

•Աշխատանքի մեջ պետք է ներգրավված լինեն բոլորը

•Ոչ մի ուսանող չի քննադատվում

•Պետք է հոգալ մասնակիցների հոգեբանական պատրաստվածության մասին. խոսքը գնում է նրա մասին, որ ոչ բոլոր մասնակիցներն են հոգեպես պատրաստ ներգրավվելու այս կամ այն աշխատանքի մեջ: Այս առումով օգտակար է գովքը, ակտիվ մասնակցության ինքնադրսևորման համար:

•Ուսուցիչը պարբերաբար ակտիվացնում է ուսանողների համագործակցությունը, հանում մասնակիցների միջև առաջացած լարվածությունը:

•Քննարկման ընթացքում անկանխատեսելի դժվարությունների դեպքում ուսուցիչը միջամտում է

•Ակտիվ օգտագործվում է տեխնիկական ուսուցման միջոցներ՝ սլայդներ, ֆիլմեր, տեսահոլովակներ

• Հաղորդակցությունը իրականացվում է ուսուցչի կողմից ձևակերպված կանոնների համապատասխան:

Ինտերակտիվ մեթոդների կիրառման դրական արդյունքներն են՝

•Ինտերկտիվ ուսուցման մեթոդները թույլ են տալիս ակտիվացնել գիտելիքների յուրացման գործընթացը, և դրանց ստեղծագործական կիրառումը գործնական խնդիրների լուծման համար:

•Ինտերկտիվ ուսուցումը մեծացնում է աշակերտների մոտիվացիան, ներգրավվածությունը քննարկվող խնդիրների լուծման մեջ, ինչը մեծացնում է հետաքրքրությունը, հուզական խթան է հանդիսանում հետագա որոնման գործունեությանը, խրախուսում է նրանց կոնկրետ գործողությունների:

•Ձևավորում է ինքնուրույն տեղեկատվություն գտնելու, վերլուծելու կարողությունը: •Զարգացնում է մյուսների տեսակետը լսելու, համագործակցելու կարողությունը: •Աշակերտների դիրքորոշման մշտական արտահայտությունը վերացնում է սխալի վախը,քանի որ նույնիսկ սխալ արտահայտությունը չի պատժվում բացասական գնահատականով:

- Համատեղ գործնեությունը նպաստում է ուսուցչի հետ վստահելի փոխհարաբերությունների առաջացմանը:

- Կիրառելով ինտերակտիվ մեթոդներ և տեխնոլոգիաներ ուսուցիչները հնարավորություն ունեն զարգացնել աշակերտների ստեղծագործական, կրեատիվ մտածելակերպը: Դա ընդունակություն է գտնել նոր, օրիգինալ, ստանդարտ մտածելակերպից դուրս մտքեր, առաջացած խնդիրների լուծում ոչ ավանդական եղանակներով:

ԻՆՏԵՐԱՐԿՏԻՎ ՄԵԹՈԴՆԵՐ

Ուսուցման ինտերակտիվ մեթոդներն են՝

1. Խճանկար
2. Պրիզմա
3. Բանավեճ
4. Մտագրոհ
5. Վենի դիագրամ
6. ԳՈՒՍ
7. Գործնական և դերային խաղեր
8. Մտածիր զուգորդիր մտքեր փոխանակիր
9. Տ-աձև աղյուսակ
10. Փոխներգործուն նշանների համակարգ
11. Աշխատանք փոքր խմբերով
12. Վիրտուալ շրջագայություն

Այսպիսով՝ վերոնշյա մեթոդների կիրառումը նպաստում է՝

1. Ուսումնական գործընթացի դրական խթանի ձևավորմանը,
2. Սովորողների ճանաչողական ակտիվության բարձրացմանը,
3. Կրթական գործընթացին աշակերտների ակտիվ ներգրավվմանը,
4. Ինքնագործունեության խթանմանը
5. Ճանաչողական գործընթացների զարգացմանը՝ խոսք, հիշողություն,մտածողություն
6. Ուսումնական նյութի առավելագույն մասի արդյունավետ յուրացմանը,
7. Ստեղծագործական մտածելակերպի զարգացմանը
8. Աշակերտների անհատական հաղորդակցական ոլորտի զարգացմանը,
9. Աշակերտների անհատական –յուրահատուկ հնարավորությունների բացահայտում,զարգացում,
10. Ինքնուրույն աշխատանքի հմտությունների զարգացում:

,

Ինտերակտիվ մեթոդների կիրառումը գրականության ուսուցման ժամանակ,դրանց արդյունավետությունը. հետազոտության փուլի նկարագրություն

Թեման `Սայաթ-Նովա

Դասարան`9-րդ,10-րդ

Դասի տիպը`նոր նյութի հաղորդում

9-րդ և 10-րդ դասարաններում աշակերտները ուսումնասիրում են Սայաթ –Նովա թեման :Քանի որ մեր դպրոցում աշակերտների թիվը մեծաքանակ չէ,որոշեցի որ 10-րդ դասարանի աշակերտները կներկայացնեն «Սայաթ-Նովա »թեմայի `կենսագրություն բաժինը:Նրա ծննդավայրին,հայրենի քաղաքին ծանոթանալու ինտերակտիվ հետաքրքիր մեթոդ է վիրտուալ շրջագայությունը: Վիրտուալ շրջագայությունները կրթական գործունեության կազմակերպման արդյունավետ ձև են, դրանք թույլ են տալիս հետաքրքիր դարձնել ուսումնական գործընթացը, օգնում են իրականացնել վիզուալիզացիայի և գիտական ուսուցման սկզբունքները, նպաստել ինքնադիտարկման հմտությունների զարգացմանը, անհրաժեշտ փաստերի հավաքագրմանը:Այսպիսով՝ աշակերտները կսովորեն և կսովորեցնեն:

Նպատակները՝

1. Ծանոթություն Սայաթ-Նովայի կենսագրությանը, ստեղծագործություն-ներին, հիշարժան վայրերին՝ կապված նրա անվան հետ:

2. Աշակերտների ճանաչողական գործունեության զարգացում, համապա-տասխան աղբյուրներից ստացված տեղեկատվությունը վերլուծելու, քննելու և ընդհանրացնելու հմտությունների զարգացում:

3. Աշակերտների մտավոր և ստեղծագործական կարողությունների զարգացում ,ինչպես նաև անհատականության քաղաքացիական - հայրենասիրական որակների ձևավորում:

Նախապատրաստական աշխատանքներ՝

1. Պատրաստել տոմսեր՝4 կանգառներով՝արժեքը կլինի նրանց վաստակած միավորը:

2. Ընտրել նյութ (տեքստ, երաժշտություն, լուսանկարներ, նկարներ էլեկտրոնային ձևով) վիրտուալ շրջագայության և վիկտորինայի ներկայացում պատրաստելու համար:

3. 10-րդ դասարանի աշակերտներին բաժանել զույգերի `4 զույգ:

4. Զույգերից յուրաքանչյուրը պատրաստում է էքսկուրսիայի էջ `համապատասխան շնորհանդեսով:

Այսպիսով ` կունենանք սահիկ հետևյալ թեմատիկ ընդգրկումով՝

1-ին զույգ `Թիֆլիսի մասին տեղեկություններ,

2-րդ զույգ՝ հիշարժան վայրեր Թիֆլիսում `կապված Սայաթ Նովայի հետ,

3-րդ զույգ `Թիֆլիսը և նշանավոր հայերը,

4– րդ զույգը `Սայաթ-Նովան արվեստում:

Դասարանի պատրաստում. սեղաններն ու աթոռները տեղադրվում են դասարանի վերջում `կիսաշրջանաձև: Դասասենյակի կենտրոնն ազատ է, հակառակ կողմում էկրան է ու հանպատրաստից բեմի տեղը:

Մասնակիցների թիվը՝ 15 աշակերտ

Մասնակիցների տարիքը՝ 14-15 տարեկան,

Վարման ձև՝ վիրտուալ շրջագայություն վիկտորինայի տարրերով

Վայրը՝ հայոց լեզվի և գրականության դասասենյակ

Սարքավորումներ պրոյեկտոր, էկրան, համակարգիչ՝ վիրտուալ շրջագայության ներկայացմամբ, վիկտորինա- խաղ մրցույթների ներկայացում:

Վիկտորինայի հաղթողներին պարգևատրելու մրցանակներ՝գրիչներ,բրոշյուրներ՝հայ գրողների մասին:

Տեսանյութերի ներկայացման համար պատրաստման նյութերը.

Լուսանկարներ՝ Սայաթ-Սովան նկարչության, երաժշտության, քանդակագործության և կինոարվեստի մեջ, Սբ.Գևորգ եկեղեցի, Հավլաբար, Խոջիվանք՝ հիշարժան վայրերի լուսանկարներ,Ֆիլմ

Երաժշտական ուղեկցում.

հատվածներ Սայաթ-Նովայի ստեղծագործություններից՝ երաժշտություններից

Դասի ընթացքը

Ուսուցիչ-Սիրելի՛աշակերտներ,ահա ձեր ճամփորդության տոմսերը, առավելագույն արժեքը՝ 10 միավոր,որոնք կլինեն ձեր վաստակած միավորները յուրաքանչյուր կանգառից հետ: Ձեզ բարի երթ:

Հնչում է երաժշտություն

Ուսուցիչ -Ընդհանրապես գրական օրացույցը պարունակում է գրականության աշխարհի կարևոր տարեթվերն ու իրադարձությունները.իրադարձություններ հեղինակների կենսագրությունից: Օրացույցը մեր «Գրանկյուն»գրական խմբակի հեղինակային մտահղացումն է,որտեղ ներկայացված են տարբեր հեղինակներ ու նրանց մասին որոշ տեղեկություններ: Կդիտենք օրացույցի ընդամենը մի քանի թերթ,կծանոթանանք բանաստեղծի կենսագրությանն ու աշխատանքին,նրա հետ կապված հիշարժան վայրերին:Կստեղծենք օրացույցի մի քանի նոր թերթ:Իսկ այժմ լսեք ձեր դասընկերներին:

Այնուհետև յուրաքանչյուր զույգ ցուցադրում և ներկայացնում է իր կատարած աշխատանքը:Յուրաքանչյուր զույգի պատրաստած տեսասահիկից հետո տրվում են ստուգիչ հարցեր և համապատասխան միավորներ հավաքած աշակերտները շարունակում են ճամփորդությունը:

Աշակերտները վիրտուալ ծանոթանում են Թիֆլիսին,Թիֆլիսի հիշարժան վայրերին,Սայաթ-Նովայի կյանքին և ստեղծագործություններին,Թիֆլիսում ապրած և գործունեություն ծավալած նշանավոր հայերին:

Աշխատանքները ներկայացնելուց հետո մի փոքրիկ խաղ վիկտորինա,որի միջոցով կխրախուսվեն աշակերտները:

Իսկ այժմ խաղ-վիկտորինայի կանոնները. Բարձրացնում եք ձեռքը և պատասխանում հարցին: Ճիշտ պատասխանի դեպքում նշան եք ստանում, խաղի վերջում նշանները կփոխանակվեն փոքրիկ մրցանակներով: Այսպիսով, եկեք սկսենք խաղը:



Ուսուցիչ-Սիրելի՛ աշակերտներ,մեր ճամփորդությունը ավարտվեց: Սայաթ-Նովան մեծ սեր է վայելում ընթերցողների լայն շրջանում,ինչպես հասկացաք ՝ նաև Հայաստանի սահմաններից դուրս: Հուսով ենք այսօրվա շրջագայությունը կարթնացնի ձեր հետաքրքրությունը նրա անձի և ստեղծագործությունների նկատմամբ:

Տնային առաջադրանք՝ Գրել շարադրություն այսօրվա շրջագայության մասին:

Վերջնաարդյունքում ունեցանք պրոդուկտ՝ սահիկաշար,գրական օրացույցի թերթեր,որոնք պարբերաբար կհամալրվեն:

Այնուհետև գնահատում եմ 10-րդ դասարանի աշակերտներին հետևյալ ռուբրիկով:

ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՌՈՒԲՐԻԿԻ

Գնահատման չափանիշներ	0-3 միավոր	4-6 միավոր	7-9միավոր	10 միավոր
Աշխատանքի պարտաստում	Աշխատանքը կատարված է կոպիտ սխալ-ներով,չիբնութագրում ներկայացված թեման, չի ներառում եզրակացություն	Աշխատանքը ուրվագծային բնութագրում է ներկայացված թեման, ներառում է ոչ հստակ եզրակացություն	Աշխատանքը բնութագրում է ներկայացված թեման, ներառում է եզրակացություն	Աշխատանքը ամբողջովին բնութագրում է ներկայացված թեման, ներառում է հստակ ներկայացված եզրակացություն
Աշտատանքի համար շնորհանդեսի պարտաստում	Աշխատանքի համար պարտաստված շնորհանդեսը պարտաստված չէ կամ չի արտացոլում թեմայի հիմնական դրույթները	Աշխատանքի համար պարտաստված շնորհանդեսը գրեթե արտացոլում է թեմայի հիմնական դրույթները	Աշխատանքի համար պարտաստված շնորհանդեսը արտացոլում է թեմայի հիմնական դրույթները	Աշխատանքի համար պարտաստված շնորհանդեսը ներառում է թեմայի վերաբերող բոլոր անհրաժեշտ կետերը և արտացոլում է թեման ամբողջությամբ
Կատարած աշխատանքի ներկայացման ունակություն	Աշակերտը չի կարողանում ներկայացնել թեմա	Աշակերտը աշխատանքը ներկայացնում է՝ թույլ տալով որոշակի սխալներ	Աշակերտը աշխատանքը ներկայացնում է, կիրառում ներկայացման տեխնիկական միջոցներ	Կատարված ինքնուրույն աշխատանքը ներկայացվում է ամբողջությամբ՝ բերելով օրինակներ և կիրառելով ներկայացման տեխնիկական միջոցները

:

Հետազոտության արդյունքները

Աշակերտների ընդգրկվածությունը դասապրոցեսին ինտերակտիվ և ավանդական մեթոդներով ուսուցման ժամանակ



Դասի արդյունավետությունը

Ըստ բանավոր հարցման գնահատականների



Ինչպես երևում է հետազոտության արդյունքներից դասի արդյունավետությունը տարեցտարի բարձրանում է ինտերակտիվ մեթոդներով ուսուցանելու պարագայում: «Սայաթ –Նովա »թեմայի կենսագրություն բաժինը այս ուստարում «Վիրտուալ շրջագայություն »մեթոդով ուսումնասիրելիս աշակերտների մոտ նկատեցի մեծ ներգրավվածություն ,հետաքրքրություն ,պատասխանատվություն և հիմնարար գիտելիքի առկայություն, գիտելիքը հիշելու և հիշողության մեջ երկարատև պահպանելու մոտիվացիա:Ուստի հաճախակի կարելի է օգտագործել վերոնշյալ մեթոդը,քանի որ այն նաև ապահովում է աշակերտների ներգրավվածությունը ուսումնական գործընթացին:

Եզրակացություն

Ակտիվ և ինտերակտիվ ուսուցումը մեծացնում է մասնակիցների մոտիվացիան քննարկված խնդիրները լուծելու համար, ինչը հուզական ազդակ է հաղորդում մասնակիցների հետագա որոնման գործունեությանը, խրախուսում նրանց կատարել կոնկրետ գործողություններ: Կարծում եմ տպավորիչ է, որ ինտերակտիվ ուսուցման մեջ բոլորը հաջողակ են, բոլորը նպաստում են խմբային աշխատանքի ընդհանուր արդյունքին, ուսումնական գործընթացն ավելի բովանդակալից ու հետաքրքիր է դառնում: Բացի այդ, ինտերակտիվ ուսուցումը ձևավորում է շրջանակից դուրս մտածելու, խնդրահարույց իրավիճակը յուրովի տեսնելու կարողություն, դրանից դուրս գալու ելք. արդարացնել իրենց դիրքերը, իրենց կյանքի արժեքները. զարգացնում է այնպիսի գծեր, ինչպիսիք են տարբեր տեսակետ լսելու կարողությունը, համագործակցելու, գործընկերային հարաբերությունների մեջ մտնելու ունակությունը, հակառակորդների նկատմամբ հանդուրժողականություն դրսևորելու, անհրաժեշտ տակտ, բարի կամք մասնակիցների նկատմամբ՝ փոխըմբռնման ուղիներ գտնելու գործընթացում, ճշմարտության որոնում : Ինտերակտիվ ուսուցման ժամանակ ուսուցիչն ունի օգնականի գործառույթ. նրա գործունեության մեջ կենտրոնական տեղը պետք է զբաղեցնի ոչ թե անհատ ուսանողը որպես անհատ, այլ փոխազդող ուսանողների խումբը, որոնք խթանում և ակտիվացնում են միմյանց:

Օգտագործված գրականության ցանկ

Համացանցային հղումներ

1. http://armedin.am/wp-content/uploads/2019/09/%D4%B1%D5%AF%D5%BF%D5%AB%D5%BE-%D4%BB%D5%B6%D5%BF%D5%A5%D6%80%D5%A1%D5%AF%D5%BF%D5%AB%D5%BE-%D5%B8%D6%82%D5%BD%D5%B8%D6%82%D6%81%D5%B4%D5%A1%D5%B6-%D5%B4%D5%A5%D5%A9%D5%B8%D5%A4%D5%B6%D5%A5%D6%80.pdf
2. https://hy.wikipedia.org/wiki/%D5%88%D6%82%D5%BD%D5%B8%D6%82%D6%81%D5%B4%D5%A1%D5%B6_%D5%B4%D5%A5%D5%A9%D5%B8%D5%A4%D5%B6%D5%A5%D6%80
3. Սիսյան Ս., Բաբայան Ի., Աղուզումցյան Գ., Բարձրագույն դպրոցի մանկավարժություն, ուսումնամեթոդական ձեռնարկ, Ե., 2015թ.

ՕՐՎԱ ԴԱՍԻ ՊԼԱՆ

Ամիս-ամսաթիվ <<23 >> << 09 >> 2022թ.

Առարկան՝ Հայոց լեզու դաս.10 ուսուցիչ՝ Ա.Մաթևոսյան

Դասի թեման՝ Ձայնավորների արտասանությունը և ուղղագրությունը(Է-Ե)էջ 43

Դասի նպատակները և խնդիրները

ա)ակադեմիական—Է-Ե ձայնավորների արտասանության և ուղղագրության առանձնահատկությունների իմացություն

բ) հայերեն տառերի հաջորդական դասավորվածությունը(գրական հայերեն և գրաբար)

գ) տառի և հնչյունի տարբերակում

դ) այլ լեզուների ձայնավորների համակարգի հետ համեմատում, օրինաչափությունների և տարբերությունների վերհանում

բ) սոցիալական Խմբերով աշխատելու հմտության զարգացում ,ուրիշի կարծիքը հաշվի առնելու ,սեփական կարծիք հայտնելու, համագործակցելու հմտության մշակում, մտապահման տեխնիկայի զարգացում, գիտելիքը հիշելու և կիրառելու տեխնիկայի մշակում

Անհրաժեշտ պարագաներ Դասագիրք,թղթապաստառ,նշագրիչ,թղթեր,գրիչ

Ցուցադրական նյութեր պաստառներ,տեսադաս

Հիմնական հասկացություններ ուղղագրությունուղղախոսություն,հնչյուն ,տառ,ձայնավոր,բաղաձայն

Միջառարկայական կապ անգլերեն, ռուսերեն, գրականություն, կերպարվեստ

Վերջնարդյունքներ Կկարողանա ճիշտ գրել և կարդալ սահմանված բառերը՝ 80 բառ

Դասի ընթացքը. *ներածություն. մուտք, հաճախումներ, կահավորում, տեղաբաշխում, հիգենա - 1-2 րոպե*

Խթանման փուլի նկարագրությունը և տևողությունը 10րոպե Տնային աշխատանքների ստուգում: Դասի այս փուլում օգտագործում ենք «Կանխագուշակումներ՝ հենակետային բառերով և արտահայտություններով» մեթոդը: Գրատախտակին նախօրոք գրում ենք դասի վերնագիրը, թեմայի հենակետային բառերն ու բառակապակցությունները: Աշակերտները

կանխագուշակումներ են անում, փոքրիկ պատմություններ հորինում և գուշակում, թե ինչ կապ կարող է ունենալ հայերեն տառերի հաջորդական դասավորվածությունը ձայնավորների ուղղագրությանհետ: Աշխատում են զույգերով:Ավարտելուց հետո դիտում են տեսանյութը և կարդում դասը:

Իմաստի ընկալման փուլի նկարագրությունը և տևողությունը 12 րոպե Բացատրում ենք ուղղագրություն բառի երկու իմաստները.ուղղագրություն բաժնի կարևորությունը,դրան լիարժեք տիրապետելու անհրաժեշտությունը:Այնուհետև առաջարկում ենք ներկայացնել նոր սովորած գիտելիքը «Զբոսանք պատկերասրահում» մեթոդով: Սովորողները իրենց խմբի կազմած պաստառները փակցնում են պատին և ծանոթանում միմյանց աշխատանքներին: Ապա յուրաքանչյուր խումբ ներկայացնում է իր պատրաստածը: Թեման ամբողջական ներկայացնելուց հետո կատարվում է դասի քննարկում և մտքերի փոխանակում: Գնահատվում են միավորային՝ համապատասխան հիմնավորումով:

Կշռադատման, գնահատման փուլի նկարագրությունը և տևողությունը 10րոպե Կշռադատման փուլում կատարում են քարտային աշխատանք՝է-ե ձայնավորների ուղղագրության շուրջ: Աշխատանքների ավարտից հետո ստուգվում են, շտկվում աշխատանքները, կատարվում անդրադարձ:

Տնային հանձնարարություն.1րոպե Վարժ.5,էջ 44

ՕՐՎԱ ԴԱՍԻ ՊԼԱՆ <<10 >> << 10 >> 2022թ.

Առարկան՝ Գրականություն դաս 9,10 ուսուցիչ՝ Ա.Մաթևոսյան

Դասի թեման՝ Սայաթ-Նովա.կենսագրությունը և ստեղծագործությունները

Դասի նպատակները և խնդիրները

ա) ակադեմիական- Սայաթ- Նովայի կյանքին և ստեղծագործություններին

Կծանոթանա հեղինակին նվիրված արվեստի գործերին՝ ֆիլմեր, նկարներ, քանդակներ, օպերա պատկերացում կկազմի ժամանակաշրջանի և միջավայրի մասին, որտեղ ապրել է Սայաթ-Նովան

Կշրջի Թիֆլիսի տեսարժան վայրերում,կլինի հիշարժան վայրերում

բ) սոցիալական- համագործակցել ընկերոջ կամ խմբի հետ՝ դրսևորելով հանդուրժողականություն և հարգանք մյուսների կարծիքների հանդեպ ,լսարանի առջև հանդես գալու հմտություն

Աշակերտների ճանաչողական գործունեության զարգացում, համապատասխան աղբյուրներից ստացված տեղեկատվությունը վերլուծելու, քննելու և ընդհանրացնելու հմտությունների զարգացում: Աշակերտների մտավոր և ստեղծագործական կարողությունների զարգացում ,ինչպես նաև անհատականության քաղաքացիական - հայրենասիրական որակների ձևավորում:

Անհրաժեշտ պարագաներ՝պրոյեկտոր, էկրան, համակարգիչ

Ցուցադրական նյութեր .Սահիկաշար,լուսանկարներ

Հիմնական հասկացություններ . Սայաթ-Նովա,աշուղ բանաստեղծ

Միջառարկայական կապ ՝աշխարհագրություն, ինֆորմատիկա, երաժշտություն, նկարչություն, պատմություն

Վերջնարդյունքներ ՝պրոդուկտ՝ սահիկաշար, գրական օրացույցի թերթեր, Սայաթ-Նովայի կենսագրության,ստեղծագործությունների իմացություն

Դասի ընթացքը. *ներածություն. մուտք, հաճախումներ, կահավորում, տեղաբաշխում, հիգենա - 1-2 րոպե*

Խթանման փուլի նկարագրությունը և տևողությունը 7 րոպե Երաժշտության ներքո շրջագայության տոմսակների բաժանում ՝համապատասխան բացատրությամբ: Աշակերտներին բացատրվում է, որ յուրաքանչյուր հաջորդ տեսարժան վայրում լինելու համար պետք է ուշադիր լինեն ,պատասխանեն

հարցերին և վաստակեն համապատասխան միավորը: Յուրաքանչյուր հարց ունի իր միավորը՝ ըստ բարդության աստիճանի:

Իմաստի ընկալման փուլի նկարագրությունը և տևողությունը 25 րոպե Այնուհետև յուրաքանչյուր զույգ ցուցադրում և ներկայացնում է իր կատարած աշխատանքը: Յուրաքանչյուր զույգի պատրաստած տեսասահիկից հետո տրվում են ստուգիչ հարցեր և համապատասխան միավորներ հավաքած աշակերտները շարունակում են ճամփորդությունը: Աշակերտները վիրտուալ շրջում են Թիֆլիսում ,Թիֆլիսի հիշարժան վայրերում,ծանոթանում Սայաթ-Նովայի կյանքին ,գործունեությանը և ստեղծագործություններին, Թիֆլիսում ապրած և գործունեություն ծավալած նշանավոր հայերին՝ Թումանյան, Ռաֆֆի, Սունդուկյան, Փարաջանով: Լինում են Հավլաբարում, Ս.Գևորգ եկեղեցում,Խոջիվանքում,Մետեխի վանքում:

Կշռադատման, գնահատման փուլի նկարագրությունը և տևողությունը 13րոպե խաղ-վիկտորինա հետևյալ կանոններով.հնչում է հարցը,հարցի պատասխանը իմանալու դեպքում աշակերտները ձեռք են բարձրացնում և պատասխանում հարցին: Ճիշտ պատասխանի դեպքում միավորներ են ստանում՝բարձրացնելով իրենց գնահատականը: Խաղի վերջում ակտիվ մասնակիցները և շրջագայության ուղեվարները ստանում են մրցանակներ:

Տնային հանձնարարություն 1 րոպե ՝ Գրել շարադրություն այսօրվա շրջագայության ամենատպավորիչ պահի մասին: